

Ելիզ ՈՍԿԱՆՅԱՆ Երևանի պետական համալսարան

ՄԵՂՄԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱԾՈՒԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Ի սկզբանե բանն էր և բանն էր առ Աստված....

Հնուց ի վեր մարդիկ գերբնական ուժ են վերագրել խոսքին, դիտարկելով այն որպես հասկացության կամ երևոյթի անքակտելի մաս: Առարկայի անունն իմանալը դիտարկվել է որպես իշխանություն վերջինիս հանդեպ: Նույնիսկ մեր օրերում շրջանառվում է այն կարծիքը, որ միտքը, ինչպես նաև դրա դրսորումը՝ բանափոր և գրափոր խոսքը, նյութական է և հարկավոր է խուսափել բացասական երևոյթներն անվանելուց: Ժամանակակից հասարակությունը հիմնականում գերծ է անցյալի նախապաշտումներից, սակայն մարդիկ դեռևս խուսափում են ուղղակիորեն անվանել այնպիսի երևոյթներ, որոնք մեզ ցավ են պատճառում, վախեցնում են, ինչպես օրինակ մահը, որոշ անրուժելի հիվանդություններ: Ելնելով գեղագիտական կամ բարոյական նորմերից մենք չենք խոսում ֆիզիոլոգիական երևոյթների մասին, խուսափում ուղղակիորեն շոշափել այնպիսի թեմաներ, որոնք առնչվում են սեռական հարաբերություններին, բնածին և ձեռքբերովի արատներին, ինչպես նաև չենք անվանում մարդու մարմնի որոշ մասեր:

Հաղորդակցության ժամանակ թերևս ամենակարևոր բանն է լսել և հասկանալ այն ինչ ուղղակիորեն չի ասվում: Իրականությունը անուղղակի կերպով արտացոլվում է մեղմասությունների «լեզվական թգենու տերևների» միջոցով /Rawson, 1988/ (“Linguistic fig leaves” եզրույթը փոխարեւական հղում է բիբլիական Ծննդոց գրքին, որում նկարագրվում է, թե ինչպես են Ադամն ու Եվան բացնում իրենց մերկությունը՝ Զարի ու բարու ծառի պտուղը ճաշակելուց հետո: Փոխարեւական թգենու տերևը ակնարկում է մի երևոյթի մասին, որը տեսանելի է, բայց անվճառ, թե խոսողի, թե խոսակցի համար): Մեղմասության, որպես լեզվական մեծ հետաքրքրություն ներկայացնող երևոյթի, դեռ հաստատվում է վերջինիս հանդեպ հետաքրքրության դրսորումով՝ սկսած անտիկ ժամանակաշրջանից: Օ.Մ. Ֆրեյդնբերգի խմբագությամբ հրատարակված լեզվաբանու-

թյան և ոճի շուրջ անտիկ տեսությունների մասին աշխատության մեջ նշվում է «մեղմասություն» եզրույթի կիրառության մասին Դեմոկրիտեսի, Պլատոնի, Արիստոտելի կողմից /Փրեյդեներգ, 1936/: Կարելի է վսատահաբար ասել, որ մարդիկ գիտեին այս լեզվական արտահայտչամիջոցի մասին և կիրառում էին այն հնում և շարունակում են այն կիրառել նաև մեր օրերում:

Մեղմասությունները պարզապես լեզվական ֆենոմեն չեն, այլ մարդու կողմից իրականությունը որոշակիորեն համակարգելու հակ-վածություն: Առավել հարմար և ընդունելի բառ կիրառելով, մարդը նվազեցնում է իրականության հետ եղած կոնֆլիկտի արությունը, որը առաջանում է որոշակի բառերի արտասանման արգելքի պատճառով:

Լեզվաբանական գրականության մեջ կան «մեղմասություն» հասկացության բազմաթիվ սահմանումներ: Նրանց մեջ արտացոլվում են տվյալ երևույթի տարրեր գործառույթները: Ամփոփելով գրականության մեջ եղած սահմանումները, ինչպես նաև մեր դիտարկումները կարելի է ասել, որ մեղմասություններն ունեն երեք հիմնական գործառույթ:

1. Խոսողի համար կոպիտ կամ տիաճ երևույթի մեղմացում: Խոսողի կողմից կատարվում է տվյալ երևույթի գնահատում, դրա ուղղակի անվանումը դիտարկվում է, որպես կոպիտ, անպարկեշտ, խիստ /Ախմանովա, 1969; Շմելյով, 1979; Ոռ-գենտալ, 1976; Կոխին, 1996; Գալպերին, 1981 և այլք/:
2. Խոսակցի համար կոպիտ կամ տիաճ երևույթի մեղմացում: Մեղմացման հիմնական գործառույթից բացի նշվում է նաև սոցիալական դրդապատճառների կարևորությունը /Պարտ-րիջ, 1964; Կացել, 1989; Ալլան և Բերիջ, 1991; Տյուրինա, 1998 և այլք/:
3. Շշնարտության քողարկում: Արժանահիշատակ է այն փաս-տը, որ խոսողի կողմից կատարվում է բառերի և արտահայ-տությունների այնպիսի ընտրություն, որ դրանք ոչ միայն պարզապես մեղմացնում են այս կամ այն անընդունելի երե-կույթները, այլև քողակում, շղարշում են երևույթի բուն եռու-թյունը /Լոուրենս, 1973; Նիման և Սիլվեր, 1990/:

Այսպիսով, մեղմասությունները ցանկացած անթույլատրելի կամ անցանկալի բառերի կամ արտահայտությունների ավելի բաղաքա-վարի փոխարինորդներն են, որոնց նպատակն է խուսափել խոսողի,

խոսակցի մոտ բացասական զգացմունքներ առաջացնող ուղղակի անվանումներից, ինչպես նաև քողարկել իրականության որոշակի փաստեր:

Խոսքի մեղմումը անդադար գործընթաց է, որի ընթացքում «հնացած» ձևերը փոխարինվում են նորերով, այսպիսով խոսողի կողմից տեղի է ունենում արտահայտչամիջոցների արժևորում և վերարժևորում, որի վերջնական նպատակն առողջ հաղորդակցությունն է:

Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ խոսքի մեղմումը հետապնդում է երկու հիմնական նպատակ՝ ներանձնական հարաբերություններում կոնֆլիկտից խուսափելը և իրականության շղարշելը: Եթե առաջին դեպքում գործում են քաղաքավարության և դեմքը չկորցնելու դրույթները, խոսողն առաջնորդվում է տվյալ մշակույթում գործող քաղաքավարության կանոնների պահպանման սկզբունքով, որոնք բելադրված են մարդու ներքին բարեկրթությամբ, ապա երկրորդի դեպքում՝ հասարակության լայն զանգվածներից իրականության որոշ փաստեր քողարկելու համար, կիրառվում է այնպիսի քառապաշտը, որը առավել նպաստավոր կերպով կներկայացնի իրավիճակը՝ ամենահին էլ այն չփոխելով:

Բերենք մի շարք օրինակներ, որոնց վերլուծությունը ավելի ակնհայտ կդարձնի մեր առաջ քաշած դրույթները

1. Big-boned = heavy, overweight (գեր): Բառն իր բուն բառանային իմաստով նշանակում է խոշոր, հաղթանդամ, սակայն փոխարերական իմաստով, որպես մեղմատություն կիրառելիս, այն ձեռք է բերում *զեր* իմաստը: Կարծես մարդուն խոշոր անվանելիս փորձում ենք անտեսել ավելորդ կիլոգրամների առկայությունը, կամ էլ այդ ամենը վերագրել խոշոր կառուցվարձի առանձնահատկություններին:

... in his beefy adolescence his mother had tactfully described him as '**big-boned**', though 'burly' was how he now liked to see himself. /Boyd, 1981/

2. Unmotivated = lazy (ծույլ): Հավանաբար ավելի «քաղաքավարի» է ծույլությունը բացատրել արտաքին դրդապատճառների բացակայությամբ, այսպիսով կարելի է խոսել իրողության մասին խուսափելով կոնֆլիկտներից և չփրավորելով դիմացինի արժանապատվությունը:

Some young people are able, but **unmotivated** and dishonest.

/Scientific American, Apr 18, 2013/

3. Economical with the truth = liar (ստախոս) Եվս մեկ փայլուն օրինակ խուսափելու ներանձնային կոնֆիդենտիլից:

Lawyer: What is the difference between a misleading impression and a lie? Armstrong:

A lie is a straight untruth. Lawyer: What is a misleading impression - a sort of bent untruth?

Armstrong: As one person said, it is perhaps being "economical with the truth". <http://www.phrases.org.uk/meanings/127700.html>

4. Absorption = a military conquest ուղղիղ իմաստով լլանում, ներծծում:

Ա. Քլարքը 1939 թվականին Ռուսաստանի կողմից արևելյան Լեհաստանի գրավվման մասին գրում է. “These measures, together with the ‘absorption’ of the Baltic states in the north, advanced the western frontiers of the Soviet Union by hundreds of miles.” ‘Seizure’ բառի փոխարեն ‘absorption’ բառը կիրառելով հեղինակը խուսափում է ուղղակիորեն մատնանշել այն բոլոր հետևանքները, որոնք ընկած են եղել այս ռազմական գործողությունների հիմքում, «կլանել» չի նշանակում սպանել, ավիրել, բալանել, ոչնչացնել մշակութային արժեքները, որոնք ցանկացած նվաճման անքակտելի մասն են կազմում:

5. intelligence = spies and spying (լրտեսներ, լրտեսություն): Կարևորելով հատուկ գործակալների մտավոր կարողությունները, ընդունակությունները ‘intelligence’ բառն այժմ կիրառում ենք լրտեսների մասին խոսելիս:

“America’s intelligence agencies should devote their resources to the most serious security threats, principally international terrorism and adverse political trends.” <http://www.cato.org/pubs/pas/pa-265.html>

6. asset = foreign spies (լրտեսներ, լրտեսություն): Ուղիղ իմաստով ‘asset’ բառը նշանակում է ցանկացած արժեքավոր կամ օգտակար բան, սակայն լրտեսների բառապաշարում, այն ձեռք է բերել մի ուրույն, լրացնցից իմաստ, ինչպես օրինակ “... the CIA had played a direct role in placing underwater mines in three Nicaraguan harbors. This... had all been done by ‘unilaterally controlled Latino assets’ the UCLA’s.” /Woodward, 1987/: Իհարկե, օսար երկրում լրտեսների առկայությունը շատ արժեքավոր կարող է լինել գաղտնի տեղեկատվության ստացման տեսանկյունից:

7. freedom fighter = armed political rebel (զինված ապստամբներ):
Արտահայտությունը բաղկացած է ‘freedom’ ազատություն և ‘fighter’ պայքառող բառերից, այսինքն կարելի է եղակացնել, որ սրանք մարդիկ են, որոնց նպատակը ազատության համար մարտնչելն է, սակայն այս ազատությանը հասնելու նպատակով նրանք պատրաստ են գնալ ամենածայրահետ միջոցների, ընդունակ մինչև տարատեսակ տեռորիստական գործողությունների դիմելը:

“We are not murderers... we are freedom fighters against international imperialism” /Sharpe, 1979/.

Ինչպես նշում է մեղմասությունների բառարանի հեղինակ Հ. Ռուստնը “Euphemisms are embedded so deeply in our language that few of us, even those who pride themselves on being plainspoken, ever get through a day without using them.” /Rawson, 1983/

Անժխտելի է այն փաստը, որ յուրաքանչյուր լեզու արտացոլում է նրանով խոսող մարդկանց մշակույթը՝ նրանում իրենց տեղն են գտնում հասարակության մեջ տեղի ունեցող ցանկացած փոփխություններ: Մշակույթը կարգավորում է մարդկանց վարքը զսպելով հասարակության համար Վտանգավոր կամ վճառակար հակվածության դրսորումները, սահմանում է նորմեր բարոյական, օրենսդրական, գեղագիտական: Այս նորմերը իրենց տեղն են գտնում լեզվում: Մեղմասությունների տակ բաքնված իմաստը հասկանալու համար պետք է կատարյալ կերպով տիրապետել լեզվին, ժամանակին համահունչ քայլել, տեղեկացված լինել վերջին իրադարձությունների մասին, ինչպես նաև ցանոթ լինել տվյալ ժողովրդի պատմությանը, սովորույթներին: Թերևս համարձակ կերպով կարելի է նշել, որ տարբեր լեզուներում առկա մեղմասությունների կիրառության ոլորտները, բացառությամբ թերևս մասի, հիվանդություն և սեռական հարաբերություններ արտահայտող ամենահին մեղմասությունների տարբերվում են: Այս իսկ պատճառով մեղմասությունների ուսումնասիրությամբ գրավողները պետք է վերլուծեն ոչ միայն մեղմասությունները, այլև, ինչպես նշում է Կրիսինը, այն սոցիալ-մշակութային և լեզվական ֆոնը, որի հիմքի վրա առաջանում է մեղմասությունների կիրառման կարիքը /Կրիսին, 1994/:

Ժամանակի ընթացքում որոշ երևույթներ և դրանց անվանումները դուրս են գալիս կիրառությունից, բայց մեղմասություն ֆենոմենը հարատև է լեզվի մեջ: Սա ոչ միայն լեզվի և խոսքի արտահայտիչ

միջոց է, այլև իրականությունը համակարգելու միջոց, որը հնարավորություն է տալիս տարբերակել երևացողն ու աներևույթը, բացահայտել երևույթի էռոքյունը: Կարճ, հստակ ուղիղ անվանումները ավելի ճշգրիտ պատկերացում են տալիս իրականության մասին, սակայն մարդիկ նախընտրում են գեղեցկացնել իրենց խոսքը մեղմասություններով՝ վերացականի, փոխարերության, ժարգոնի և թերասության մի խառնուրդ, որը հիանալի կերպով պաշտպանում է դաժան իրականությունից: Առանց մեղմասությունների հասարակությունը միզուցե ավելի ազնիվ լիներ, սակայն միևնույն ժամանակ ավելի կոպիտ: Երբեմն դիմացինի զգացմունքները չվիրավորելու համար կիրառվող սուսր գերադասելի է ճշմարտությունից: Եկեք փորձենք պահպանել այն նույրը երևակայական սահմանը, որը բաժանում է քաղաքավարի խոսքը ստից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Фрейденберга О.М. (ред.) Античная теория языкоznания и стиля. СПб, 1996.
2. Арнольд И.В. Лексикология современного английского языка. М., 1996.
3. Артюшкина Л.В. Семантический аспект эвфемистической лексики в современном английском языке. Дисс. канд. филол. наук. М., 2002.
4. Ахманова О.С. Словарь лингвистических терминов. М., 1969.
5. Бердова Н.М. Эвфемизмы в свете теории вторичной номинации: Дисс. канд. филол. наук. М., 1998.
6. Босчаева Н.Ц. Контекстуальная эвфемия в современном английском языке. Л., 1989.
7. Будагов Р.А. Введение в науку о языке. М., 2003.
8. Гальперин И.Р. Текст как объект лингвистического исследования. М.: Наука, 1981.
9. Кацев А. М. Языковое табу и эвфемия. Л.: ЛГПИ, 1989.
10. Крысин Л.П. Эвфемизмы в современной русской речи. <http://www.lingvotech.com/krysin-94>
11. Ларин Б.А. Об эвфемизмах // Учёные записки ЛГУ, серия филологических наук, 1961, № 301.
12. Маковский М.М. Феномен табу в традициях и языке индоевропейцев. М., 2006.
13. Реформатский А.А. Введение в языковедение. М., 2005.

14. Розенталь Д.Э. Практическая стилистика русского языка. М.: Высшая школа, 1977.
15. Сеничкина Е.П. Эвфемизмы русского языка. М., 2006.
16. Тюрина Е. Е. Семантический статус эвфемизмов и их место в системе номинативных средств языка (на материале современного английского языка). Автореф. дис. канд. филол. наук. Нижний Новгород, 1998.
17. Allan K. Linguistic meaning. London, New York: Routledge & Kegan Paul, 1986.
18. Allan K., Burridge K. Euphemism and Dysphemism: Language Used as Shield and Weapon. Oxford: OUP, 1991.
19. Burridge K. Political correctness: euphemism with attitude. Vol. 12, No. 3. English Today, 1996.
20. Holder R.W. Dictionary of Euphemisms. Oxford, 1995.
21. Lawrence J. Unmentionables and other euphemisms. London: Gentry Books, 1973.
22. Partridge E. Slang today and yesterday. London, Boston, Henley: Routledge & Kegan Paul, 1979.
23. Rawson H. A Dictionary of Euphemisms and other Doubletalk. New York: Crown publishers Inc, 1988.
24. Spears R. Slang and Euphemisms. New York: Jonathan David Publishers, Inc, 1981.

Э. ВОСКАНЯН – *Основные функции и цели эвфемизации речи*.

Эвфемизмы и эвфемизация речи уходят своими корнями в природу человека как существа, чувствующего свою слабость перед силами природы. В лингвистической литературе существует довольно много определений понятия «эвфемизм». В них отражены различные функции данного явления. В статье рассматриваются 3 основные функции, а также цели эвфемизации речи.

E. VOSKANYAN – *Basic Functions and Aims of Euphemizing the Speech.* – Euphemisms are embedded deeply in human beings, who realize their weakness before the forces of Nature. There are numerous definitions of the concept “euphemism” in linguistics, which elucidate different functions of the given phenomenon. The paper considers three basic functions, as well as aims of euphemizing the speech.